Մասիս լեռան մասին արաբական զրույցը

Ա. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ

Հայկական լեռնաշխարհի խորհրդաւոր բարձունքը՝ Մասիս լեռը դարերի ընթացքում նիւթ է դարձել բազում զրոյցների, որոնց շարքում իր ուրոյն տեղն ունի արաբ մատենագրութեան էջերում դեռ Ժ. դարից պատմուող այն հետաքրքրական աւանդութիւնը, ուր Մասիս լեռան հետ միացւում է Արաքսի մասին զրոյցը։

Մասիսը քաջ յայտնի էր արաբներին, որոնք Մեծ Մասիսը կոչում էին Հարիս, իսկ Փոքրը՝ Հուայրաս (Հարիսիկ)։ Ըստ Ժ. դարի աշխարհագրագէտ Իսթախրիի «Դարբիլի (Դուինի) մօտ կայ մի մեծ լեռ, որը կոչւում է ալ-Հարիս. սրա գագաթը բարձրանալ հնարաւոր չէ, բարձրութեան եւ ճանապարհի դժուարութեան պատճառով, իսկ ձիւնը նրա վրայ միշտ կայ։ Նրանից ցածր կայ մի փոքր լեռ, որը կոչւում է ալ-Հուայրաս։ Հարիսից են բխում (այդ երկրի) բազում ջրեր եւ նրա վրայ են փայտ կտրելու (անտառները) եւ որսատեղերը։ Ասւում է, որ այս կողմերում նրանից աւելի բարձր լեռ չկայ» (1)։

Նոյն դարի աշխարհագրագէտ Իպն Հաուկալը արդէն մի հետաքրքրական զրոյց է հաղորդում Մասիս լեռան եւ Արաքս գետի մասին։ «Սա ալ-Ռասն է եւ բարձրեալն Ալլահը յիշել է (Ղուրանում) նրա ժողովրդի եւ նրա նկատմամբ իր արածը։ Եթէ մէկը կարողանայ ուշադիր նայել անցնելով նրա երկու կողմերով Վարսան (Վարդանակերտ) քաղաքից դէպի վերեւ եւ դէպի վայր, ապա կը տեսնի քաղաքների աւերակներ, որոնք քանդուել են, փլուել, մի քանիսը խորտակուել եւ գլխիվայր շուռ են եկել, հաստատելով

1) Bibliotheca Geographorum Arabicorum, I, 191.

բարձրեալն Ալլահի խօսքերը՝ Ադն ու Սամուդը եւ ալ-Ռասի բնակիչները, բազում սերունդներ կան նրանց եւ մեր միջեւ։ Բոլորին օրինակներ տուեցինք եւ բոլորին կործանման ենթարկեցինք» (2)։

Ժ. դարի աշխարհագրագէտ Մուկատասին նոյն բանը կրկնելով աւելացնում է, որ Հարիսը եւ Հուայրասը Թաիֆից (Արաբիայից) են բերուած.

«Հարիսը մահմեդական երկրներում բարձր լեռ է եւ որի գագաթը ոչ ոք կարող է բարձրանալ։ Ասում են, որ նա Հուայրասի հետ միասին Թաիֆի լեռներից էր, իսկ ալ-Ռաս գետի վրայ եղել է հազար քաղաք, որոնք այժմ նրանց երկուսի տակ են գտնուում» (3)։ Այս զրոյցը քաջ ծանօթ է նաեւ նոյն դարի մատենագիր Մասուտիին, որը, ի միջի այլոց, յիշում է այն։

ԺԳ. դարի նշանաւոր աշխարհագրագէտ Եաղուտը ի մի բերելով եղած զրոյցները, իր աշխարհագրական բառարանի մէջ Մեծ եւ Փոքր Մասիսների մասին գրում է.

«Հայաստանի մէջ երկու լեռներ են, որոնց վրայ են գտնուում Հայաստանի Թագաւորների չիրիմները իրենց գանձերով։ Ասում են, թէ Բլինիաս իմաստունը կախարդել է այդ լեռները, որպէսզի մարդիկ չկարողանան վերեւ բարձրանալ։ Մատաինին ասում է, որ Հարիսը եւ Հուայրասը, որոնք Դարիլի (Դուինի) մօտ են գտնուում, իրենց անունն ստացել են Հուայրաս Իպն Օդպայից եւ Հարիս Իպն Ամրուից, որոնք Սալման Իպն Ռապիայի հետ Հայաստան են եկել եւ նրանք առաջինն են, որ մուտք գործեցին այդ լեռները, որոնք կոչուեցին նրանց անուններով։

«Իպն ալ-Ֆաքիհը պատմում է, թէ Հայաստանում Արաքսի եզերքին հազար քաղաք կար եւ Ալլահը նրանց ուղարկեց մի մարգարէ Մովսէս կոչուած (բայց ոչ Ամրանի որդի Մովսէսին), որպէսզի նրանց իր հաւատքին հրաւիրի։ Բայց նրանք մերժեցին ու քարկոծեցին նրան եւ նրա հրամանն անսաստեցին։ Նա էլ անիծեց նրանց եւ Ալլահը նրանց վրայ շրջեց Հարիսն ու Հուայրասը եւ ասում են, թէ այդ բնակիչները թաղուած են նրանց տակ» (4)։

Սրա շարունակութիւնն է Եաղուտի մի ուրիշ հատուածը Արաքսի մասին. «Պատմում են, թէ ալ-Ռասի շուրջը հազար քաղաք

---

2) Opus Geographicum auctore Ibn Hauqal. Lugd. Bat., 1938, II, 345.

3) Bibl. Geogr. Arab., III, 380.

4) Jacut's Geographisches Wörterbuck, Leipzig, 1924, II ,183. Հ. Նալբանդեան, Արաբական աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, Երեւան, 1965, էջ 51։

դոյութիւն ունէր։ Ալլահը նրանց ուղարկեց Մովսէս անունով մի մարդարէ, որը տարբեր է Ամրանի որդի Մովսէսից։ Սա հրաւիրեց նրանց Ալլահի հաւատքին, բայց նրանք չհաւատացին նրան, ուրացան եւ դէմ դնացին նրա հրամաններին։ Այդ ժամանակ մարդարէն անիծեց նրանց եւ Ալլահը Հարիսն ու Հուայրասը փոխադրեց Թաիֆից դէպի Առան եւ նրանց տակ թաղուեցին ալ-Ռասի բնակիչները»։ Ապա Եաղուտը աւելացնում է.

«Ալ-Ռասը ոռոգում է Պալասաջանի դաշտային շրջանը, որը երկարում է գետի ափերի վրայ, սկսելով Պարզանդից դէպի Պարզա երկարող գծից մինչեւ ծովը եւ ընդգրկում է Վարսանը (Վարդանակերտ) եւ Պայտականը։ Այդ դաշտային շրջանում հինգ հազար գիւղեր կային եւ այժմ մեծ մասամբ աւերակ են, միայն պատերն ու շէնքերը մնում են տակաւին եւ չեն այլայլուած հողի ընտիր որակի շնորհիւ։ Ասում են, թէ ալ-Ռասի մարդիկ սերած են Գողիաթից եւ բնաջնջուեցին Դաւթի ու Սողոմոնի ձեռքով, երբ դադարեցին հարկ վճարելուց։ Գողիաթն էլ սպաննուել է Ուրմիայում» (5)։

Մասիս լերան ու Արաքսի մասին այս արաբական զրոյցը երկու աղբիւր ունի՝ հայկական եւ արաբական, որոնց միաձուլումից է առաջացել։

Մասիսը հնադոյն ժամանակներից զրոյցների նիւթ է դարձել Հայաստանում։ Մովսէս Խորենացու մօտ յիշւում է, որ Հայոց Տիգրան արքան Մարաց թագաւոր Աժդահակին յաղթելուց յետոյ, նրա առաջին կնոջ Անոյշին գերիների հետ միասին բնակեցնում է Մասիս լերան մերձակայքում. «Բայց վերը յիշուած Անոյշ կնոջ իր որդիներով հանդիստ բնակեցնում է Մեծ լերան փլուածքի վերջում։ (Այս փլուածքն, ասում են, առաջ է եկել մի ահագին երկրաշարժից. այս բանը պատմում են այն մարդիկ, որոնք Պողոմէոսի հրամանով ընդարձակ ուղեւորութիւններ կատարելով, ասպարէզներով չափեցին մարդկանց բնակութեան տեղերը, մասամբ նաեւ ծովը եւ անբնակ վայրերը Այրեցեալ գօտուց մինչեւ Քիմիւռոն)։ Իսկ Անոյշին սպասաւորներ տալիս է նոյն այն մարդկանցից, որ լերան ստորոտում բնակուեցին» (6)։

(Բայց զնախասացեալ կինն Անոյշ բնակեցուցանէ որդւովք

---

5) Jacut, II, 778. Նալբանդեան, Արաբական աղբիւրները, էջ 69։

6) Մովսէս Խորենացի, Հայոց Պատմութիւն, թարգմ. Ստ. Մալխասեանի, Երեւան, 1940, Գիրք Ա., գլուխ Լ.։

իւրովք յանդգնութեան սպառուածի փլածին Մեծի լերինն։ (Զորմէ լեալ ասեն յահագին իմն շարժմանէ, զոր պատմեն՝ որք բազմաշրջութեամբ հրամանաւ Պաղոմեայ սպարիսօք զինակութիւնս մարդկան չափեցին, այլ եւ մասն ինչ գծով եւ զանբնակս յայրեցածէն մինչեւ ցՊիմիւռոն)։ Իսկ Պաշտօնեայս տայ Անուշայ ի նոյն Մարաց որ առ ոտամբ լերինն բնակեցան) (7)։

Ապա Խորենացին աւելացնում է, որ իր պատմածը վերաբերում է այն վիշապներին, որոնք ապրում են Ազատն ի վեր Մասիսի վրայ։

Մովսէս Խորենացու մօտ յիշուած է այն ահագին երկրաշարժից առաջացած փլուածքը Մեծ լերան (Մասիսի) լանջին, որը արաբական ղրոյցի մէջ վերածուել է հազար աւերակ քաղաքների, որոնց Մեծ եւ Փոքր Մասիսները ծածկել են։ Մասիսը եւ նրա շրջակայքը միշտ էլ ենթակայ են եղել ուժեղ երկրաշարժերի եւ հրաբխային ժայթքումների, որոնցից վերջինը տեղի է ունեցել 1840 թուին, կուլ տալով Ակոռի գիւղը եւ Ս. Յակոբի վանքը։ Բնականաբար այսպիսի ահագին երկրաշարժեր եղել են նաեւ հնագոյն ժամանակներում, որոնց հետեւանքով շատ բնակավայրեր կուլ են գնացել։ Խորհրդաւոր լեռը իր քաջերի միջոցով խլում էր մարդկանց եւ տանում ոչնչացնում։ Հայոց արքայ Արտաշէսը անիծելով իր Արտաւազդ որդուն, ասում է.

«Եթէ դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յԱզատն ի վեր ի Մասիս, անդ կայցես եւ զլոյս մի տեսցես» (8)։

Խորենացու մօտ յիշուած յոյն նշանաւոր աշխարհագրագէտ Պաղոմէոս Կլաւդիոսի փոխարէն Եադուսը տալիս է Բլինիաս իմաստունի անունը։ Վերջինս յունարէն Աբոլոնիոս անուան աղաւաղումն է, որի էութիւնը դեռ ճշդուած չէ (9)։ Այս անուամբ մահմեդական մատենագրութեան մէջ յայտնի է երկու անձնաւորութիւն՝ Աբոլոնիոս Պերգացին (200 Ն. Ք.) եւ մի իմաստուն, որի անձնաւորութիւնը յայտնի է դարձել Աբոլոնիոս Կապադովկիացու (Ա. դար Ն. Ք.) մասին գոյութիւն ունեցող յունական աւանդութեան շնորհիւ։ Արաբ մատենագիրները այս աւանդական անձնաւորու-

---

7) Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Էջմիածին – Տփղիս, 1913, Գիրք Ա., գլուխ Լ. (ԼԱ.)։

8) Խորենացի, Գիրք Բ., գլուխ ԿԱ.։

9) M. Plessner, Balinus, Encyclopédie de l'Islam, t. I, Leyde - Paris, 1960, p. 1024.

Թիւններին կոչում են իմաստուն (հաքիմ) եւ Թալիսմանների տէր։ Ըստ Եաղուտի այս Բլինիասը Պարսից Կաւատ արքայի հրամանով կախարդել էր նաեւ Վանայ լիճը, այնպէս որ մինչեւ այսօր տարւայ մէջ տասը ամիս այնտեղ ձուկ չի լինում (10)։

Մասիսը կամ Արարատը հին աշխարհում ծանօթ լեռ էր եւ մանաւանդ Աստուածաշնչում, ուր յիշւում է, որ Աստուածատուրի Սենեքերիմ Թագաւորի որդիները՝ Ադրամելէք եւ Սարասար «գնացին փախստական ի Հայս յերկիրն Արարատայ» (11)։

Հայաստանում Մասիսը յայտնի էր որպէս վեհանիստ եւ ահաւոր լեռ։ Վաղարշապատում եկեղեցիների շինարարութեան ժամանակ իր «խոզացեալ» վիճակից Գրիգոր Լուսաւորչի ձեռքով նոր բուժուած Տրդատ արքան անձամբ հսկայական քարեր բերեց Մասիս լերան վրայից. «Եկաւ Թագաւորը հրաժեշտ խնդրեց Սուրբ Գրիգորից եօթնօրեայ ճանապարհ գնալու բարձր լեռ Մասիսն ի վեր։ Այնտեղ լերան գլխից առնելով կարծր, անտաշ, անկոփ, խոշոր, ծանր, երկայն, հաստ եւ մեծամեծ քարեր, որոնցից մէկը ոչ ոք չէր կարող շարժել, թէկուզ եւ մարդկանց բազմութեան հետ։ Արդ, հսկայազօր Թագաւորը հայկաբար վերցնելով ութ քար, դրեց իր Թիկունքի վրայ եւ բերեց տաճարների վկայարանները։» (Եւ եկն Թագաւորն խնդրեաց հրաժեշտ ի Սրբոյն Գրիգորէ եօթնօրեայ ճանապարհ կալեալ ի վեր ի բարձր լեառն ի Մասիս։ Եւ անտի ի գլխոյ լեռնէն առեալ վէմս արաստոյս, անտաշս, անկոփս, յաղթս, ծանունս, երկայնս, ստուարս եւ մեծամեծս, որ զմի մի ոչ ումեք լինէր հնար, թէ եւ դիպելոյ բազմութեան ի մարդկանէ՝ զայն շարժել, արդ՝ առեալ սկայազօրն հայկաբար զութ արձանն՝ ի վերայ իւրոյ թիկանցն զայն դնէր եւ ըստանձնեալ բերէր ի վկայարանս տաճարացն) (12)։

Մասիս լերան մասին հայկական զրոյցը անցնելով արաբական միջավայրը, լրացուել է նոր նիւթերով։ Ելնելով Արաքսի արաբական الرس ալ-Ռաս (արտասանւում է առաս) ձեւից, արաբները այն կապել են Ղուրանի որոշ նիւթերի հետ, որտեղ նոյն անունն է յիշւում։ Խօսելով Ալլահի ուղարկած մարգարէներին ամբարիշտ մարդկանց կողմից չընդունուելու մասին, Ղուրանում ասւում է.

---

10) Jacut, I, 513.

11) Ես. Լէ, 38։

12) Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Էջմիածին–Տփղիս, 1909, պարբերութիւն 767։

«Նոյի ժողովուրդը, ալ-Ռասի մարդիկ (اصحاب الرس) Սամուտը (ثمود) Ատը (عاد) փարաւոնը եւ Ղովտի եղբայրները, բոլորը սուտ հանեցին մարգարէներին» (13)։

Ապա ասում է նաեւ. «Իսկ Նոյի մարդկանց, երբ առաքեալներին սուտ հանեցին, խեղդեցինք եւ այս բանը օրինակ դարձրինք մարդկանց համար եւ մեծ ոռնչանք տուեցինք անիրաւներին. Ատն ու Սամուտը եւ ալ-Ռասի մարդիկ, բազում սերունդներ կան նրանց եւ մեր միջեւ, բոլորին օրինակներ տուեցինք եւ բոլորին կործանման ենթարկեցինք» (14)։

Ատը եւ Սամուտը (ինչպէս նաեւ ալ-Ռասի մարդիկ) Արաբական թերակղզու հնագոյն ցեղերից են (15), որոնցից Սամուտը յայտնի էր ոչ միայն հին յոյներին, այլեւ ասորեստանեան արձանագրութիւններում է յիշւում։ Ըստ մահմեդական աւանդութեան Ալլահը ժամանակին առաքեալներ է ուղարկել այս ցեղերին (16), սակայն նրանք չեն հաւատացել նրանց եւ թշնամացել են եւ Ալլահը զայրացած ոչնչացրել է նրանց։ Իսկ Ղովտը Ղուրանում մեծարուած առաքեալ է եւ Մուհամմէտ մարգարէն նրա ու Սոդոմի ժողովրդի միջեւ եղած հակասութեան մէջ տեսնում էր իր եւ Մեքքայի հակառակորդների միջեւ եղած թշնամութեան զուգահեռը։ Նոյը նոյնպէս Ղուրանում համարուած է մեծ առաքեալ, որի սիրոյն Ալլահը թերահաւատներին մեծ պատիժ էր հասցրել։

Ղուրանի յիշած այս ամբարիշտ ցեղերի կրած պատիժը, ի հարկէ, որպէս զուգահեռ, յիշեցնում է Մասիս լերան պատժիչ հանգամանքը (ամբարիշտ Արտաւազդին պատժեցին Մասիսի քաջքերը), սակայն արաբները, ելնելով Արաքսի արաբական ալ-Ռաս ձեւի եւ Ղուրանում յիշուած նոյնանուն ցեղի ձեւական նմանութիւնից, եզրակացնում են, որ Ղուրանի խօսքերը հենց Արաքսի մասին են, իսկ այնտեղ յիշուած ցեղը Հայաստանում է ապրել Արաքսի ափին եւ իր պատիժը կրել է Մասիս լերան միջոցով։

Այստեղ պէտք է աւելացնել, որ պատժիչ տարերային ուժ էր համարւում ոչ միայն Մասիսը իր երկրաշարժերով ու հրաբուխներով, այլեւ հենց ինքը յորդառատ Արաքսը իր ողողումներով եւ հունի յաճախակի փոփոխմամբ։ Ցիշենք այդ մասին հռոմէացի մեծ

---

13) Ղուրան, 50, 12։

14) Նոյնը, 25, 40։

15) Shorter Encyclopaedia of Islam, Leiden, 1953, p. 23.

16) Ph. Hitti, History of the Arabs, London, 1958, p. 30.

բանաստեղծ Վիրգիլիոսի նշանաւոր խօսքերը Արաքսի մասին, որպէս կամուրջ չհանդուրժող գետ (17).

«Եւ Երասխայն ի կամրջաց ըմբոստ հունք» (18):

Եաղուտի այն տեղեկութիւնը, թէ Մասիս լերան կատարին Հայոց Թագաւորների գերեզմանները կային իրենց գանձերով, ըստ երեւոյթին, իւրատեսակ ակնարկ է Նոյեան տապանի մասին, թէեւ Մասիսի տապանակիր լինելու հանգամանքը Բագրատունեաց ժամանակաշրջանից առաջ հայ պատմիչները չեն յիշում, իսկ Փաւստոս Բիւզանդի մօտ յիշուած Սարարատը (Արարատը) (19) Հարաւային Հայաստանի Կորդուք գաւառի լեռներից է, որն արաբների մօտ Ջուտի է կոչւում:

Ուշ շրջանում Մասիս լերան հետ է կապւում նաեւ Մծբնայ Ս. Յակոբի պատմութիւնը, ըստ որի, նա բարձրանում էր լեռն ի վեր տապանը տեսնելու, բայց յոգնելով քնում է եւ հրեշտակը երազում նրան յայտնում է, որ տապանից մի կտոր արդէն նրա մօտ է: Ս. Յակոբ Մծբնացին վերցնում է այդ կտորը եւ իջնում ժողովրդի մօտ: Ահա այս զրոյցի արձագանգը երկար դարեր յետոյ պատմուելով հասել է մինչեւ մեր օրերը: Մեր դարի սկզբին Հ. Աճառեանը Մասիս լերան վրայ քրդերից լսել է մի աւանդութիւն հետեւեալ բովանդակութեամբ. Շատ տարիներ առաջ Մասիսի այս կողմերը, ուր Ս. Յակոբի վանքն է եղել, կոչուել է Լութ, իսկ գիւղը՝ Ախուրի: Այստեղ ապրելիս են եղել չար եւ ամբարիշտ մարդիկ, որոնցից փախչելով Յաղուբ մարգարէն բարձրացել է Մասիսն ի վեր տապանը գտնելու: Տեսնելով վերելքի ժամանակ նրա կրած չարչարանքները, հրեշտակը մի կտոր բերեց տուեց նրան: Այդ ժամանակ Աստուած բարկանալով Լութի բնակիչների վրայ, հրաբուխի միջոցով Ախուրին մոխրի վերածեց (20):

Ի հարկէ այստեղ ակնյայտ է 1840 թուականի երկրաշարժի ու հրաբխի ժամանակ Ակոռի գիւղի կործանման արձագանգը: Այսուհանդերձ, հնից եկող խաւը պարզ կերպով երեւում է յիշեալ

---

17) Հ. Ս. Էփրիկեան, Բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1907, էջ 659:

18) Պ. Վիրգիլեայ Մ. Եմէական, թարգմ. Հ. Ե. Վ. Հիւրմիւզեան, Վենետիկ, 1845, Գիրք Ը., 1090:

19) Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, դպր. Գ., գլուխ Ժ.:

20) Հ. Աճառեան, Մծբնայ Ս. Յակոբը Մասիսի քրդերի մէջ, Բանասէր, Փարիզ, 1903, էջ 61–62:

զրոյցի մէջ։ Յաղուբ (Յակոբ) մարգարէն հալածուում է եւ Մասիս լերան միջոցով վրէժ է լուծուում Լութի (Ղովտի) ժողովրդից, այսինքն Սոդոմ-Գոմորից։

Ինչպէս տեսանք, այս զրոյցի մէջ պարզ կերպով երկու խաւ է երեւում՝ հայկական եւ արաբական։ Արաբը փոխ առնելով հայկական զրոյցը (հաւանաբար բանաւոր ճանապարհով), նրա վրայ աւելացնում է նոր նիւթեր եւ այսպիսով ստացւում է մի հայ-արաբական խառն զրոյց, որի հիմքը հայկական է, բայց ժամանակի ընթացքում արաբական գունաւորում է ստացել։

Արաբ մատենագրութեան էջերում մենք գտնում ենք նման զրոյցների մի ամբողջ շարք (հայերի ծագման (21), Արայի եւ Շամիրամի (22), Կարնոյ քաղաքի (23) եւ Սասնայ ծռերի մասին), որոնց մէջ նոյն ձեւով հայկական նիւթի վրայ աւելացել է արաբականը, տալով նոր՝ հայ-արաբական խառն զրոյցներ։ Այս բոլոր զրոյցները հայ-արաբական մատենագրական հարուստ առնչութիւնների շատ հետաքրքրական նմոյշներից են։

THE ARAB FOLKTALE ON MOUNT MASSIS

A. DER-GHEVONTIAN

Mount Massis of the Armenian plateau for centuries has been subject of many folktales. The author of this study represents one of these, mentioned by Arab authors, which has been derived from the incorporation of Armenian and Arab folktales, and which has been related with the folktale of river Araxes. The folktale of Massis — in Arabic Al-Hariss — is found in the geographical and historiographical works of Istakhri (10th c.), Ibn-Hauqal (10th c.), Muqqadassi (10th c.), and Jaqut (13th c.).

---

21) Ա. Տէր Ղեւոնդեան, Հայերի ծագման զրոյցի արաբական տարբերակը, Բանբեր Երեւանի Համալսարանի, 1971, թիւ 1։

22) Նոյնի, Արա եւ Շամիրամ առասպելի արձագանգը արաբ պատմիչ Մասուտու մօտ, Պատմա-բանասիրական հանդէս, 1965, թիւ 4։

23) Ա. Տէր Ղեւոնդեան, Կարին-Թէոդուպոլիսը աւանդութեան եւ պատմութեան մէջ, Լրաբեր հասարակական գիտութիւնների, 1971, թիւ 3։